ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

24 **հունիսի** 2019 **թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 52 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական, անշարժ գույքի կառավարման, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը, իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2019 թվականի հունիսի 24-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը.

1) Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին:

2) Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

3) Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

4) Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և գույքի նվիրատվության մասին:

5) Երևան քաղաքում Հենրիկ Ոսկանյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1) Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

2) Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3) Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1) Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2) Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.45-ին:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության քարտուղար Հասմիկ Խաչունցը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի պողոտա 4 նրբանցքի հ.8 և հ.10 շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով անհատույց օտարել (նվիրել) բնակարաններ՝ Շինարարների փողոցի հ.15, Շինարարների փողոցի հ.6/1, Մարգարյան փողոցի հ.45, Սիսակյան փողոցի հ.16 հասցեներում գտնվող նորակառույց և Սիսակյան փողոցի հ.3 հասցեում նոր կառուցվող բազմաբնակարան շենքերից՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝52, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և զումար հատկացնելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1) Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել մինչև 21,000.0 հազար դրամ՝ չորրորդ աստիճանի վնասվածություն ունեցող վթարային շենքերի բնակիչներին վարձակալած տների վարձավճարները վճարելու համար բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Բնակարանային նպաստներ» հոդվածով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

3. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Լևոն Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Գայանե Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5.Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N47-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-4 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

4. **ԼՍԵՑԻՆ** - Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և գույքի նվիրատվության մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Հայկ Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Որպես նվիրաբերություն գույք ընդունելու և գույքի նվիրատվության մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի ենթակայության «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունից որպես նվիրաբերություն ընդունել վերջինիս սեփականության իրավունքով պատկանող թվով 24 հիվանդանոցային մահճակալները՝ ընդամենը 2,126,304 դրամ հաշվեկշռային արժեքով, և թվով 12 մահճակալի կողային սեղանիկները՝ ընդամենը 816,348 դրամ հաշվեկշռային արժեքով:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող թվով 24 հիվանդանոցային մահճակալները ընդամենը 2,126,304 դրամ հաշվեկշռային արժեքով և թվով 12 մահճակալների կողային սեղանիկները ընդամենը 816,348 դրամ հաշվեկշռային արժեքով նվիրել Գյումրու «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը:

3.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել գույքի նվիրաբերության, իսկ Գյումրու «Մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության հետ՝ գույքի նվիրատվության պայմանագիր:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝50, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

5. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքում Հենրիկ Ոսկանյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մ. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Հենրիկ Ոսկանյանի անվամբ փողոց անվանափոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մ. Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 8, դեմ՝ 36, ձեռնպահ՝ 8

Որոշումն չընդունվեց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Դուկասյան